

յարանց ի յառաջնորդութիւն սրբոյ ուխտիս հայոց թառոյ Տէր Յովանէսի և Տէր Սարգսի մերոյ նահանգիս վերադիտողի: Ի յարաւանապետութեան հայոց (քերաւս է) անյաղթ գիտնականի (քերաւս է) սիրի:

Զոր և գերոյ գտաւ ի համցեղան ի (քերաւս է մի տող):

Արդ ուր ընթեռնոյք գնբ աւետարանս ուղ գաւ լուսերամից: Մեղաց թողութիւն խնդրեցէք մեզ և ծնաւդաց մերոց՝ և Աճ զձեզ յիշեսցէ յիւր միւս անգամ գալստեանն. և թողութիւն մեղաց խնդրեցէ Աճածինն յիւր միածնէն, մեզ և ձեզ ի միասին յորժամ գայցէ փառաւք Հաւր և հրեշտակաւք սրբովք »:

« Իգնատիոս » գրիչը իւր անունը մի քանի տեղեր յիշում է. թերթ 16րդ՝

« Զիգնատիոս գծող սք աւետարանիս և զծնողս նորա յիշեայ ուղ եղբայր յորժամ կարդաս. ընդ նմին և զաշակերտ նորայ զՅովանէսի մի մոռանայցես ի բարի կամաց. և Աճ զձեզ յիշէ ի բարի »:

21րդ թերթում, Մատթէոսի աւետարանի սկզբում, գունաւորւած և ջրձանակւած 4 տողում գրւած է « Տր Աճ ողորմեա ստացողիս սորա և իգնատիոս գրչի, յաղաւթս յիշեա ուղ Տր »:

124րդ թերթում, Մատթէոսի աւետարանի վերջում 6 տող մագաղաթը բերւած է և նորէն գրւած. « Զստացող սք աւետարանիս զՊատրոն բռնաւորն և զՏղա տիկին և զծնաւդսն իւրեանց յաղաւթս (քերաւս) յիշեայ ուղ Տր իմ »:

200րդ թերթում, Մարկոսի աւետարանի վերջում գրւած է. « Զիգնատիոս մեղաւոր գրիչ, և զստացաւ սորա յիշեալիք ի սուրբ յաղաւթս ձեր՝ աղաւթս »:

316րդ թերթում, Ղուկասի աւետարանի վերջում գրւած է. « Տր Աճ ողորմեայ, իգնատիոս մեղաւոր գրչի » երկաթագիր, սև մեխնով. իսկ շարունակութիւնը գրւած է բոլոր գրով և կարմիր մեխնով՝ հետեւեալը.

« Կն Աճ քո սք աւետարանիս բաւարիստութեամբ ողորմեայ ստացողի սորա Պատրոն բռնաւորին և ամուսնոյ իւրոյ Տղայ Տիկնոջն և ծնաւդաց իւրեանց և եղբարց ի քում գալստեանդ: Աղաւթս: Ամէն »:

Ս. ՄԵՆԻՔ-ՅԱՅՈՐԵԱՆ

ՄՍԱՃԱՆԻ ԶԱՅՐՄԱՃԱԼ ԳԱՒՈՐ

(Աւագ-Գրչի - Պատմական հաստատութիւն)

(Շար. տես Բազմ. 1924, էջ 297)

Մատնակների դաստիարակութիւն. — Ճիշդ է, որ Զահարմահալցի ծնողները սէր և փայլ-փայտք են ցոյց տալիս զէպի իրենց զաւակները, բայց նրանց դաստիարակութեան վրայ առանձին ուշադրութիւն չեն դարձնում: Երեխաները երբ 4-5 տարեկան են դառնում, ոտաբոբիկ և կիսամերկ ընկնում են փողոցները և պարապ-սարապ թափառում, խաղում հողի, ցեխի հետ և զարճանում են իրենց հասակակից երեխաների հետ. քաղցը միայն նրանց ստիպում է տուն վերադառնալ: Ապա նորից փողոց են իջնում, ուր, բացի հայհոյանքից, ստախօսութիւնից ուրիշ բան չեն սովորում:

Զմեռը, եթէ գիւղում դպրոց կայ, ծնողները նրանց ուսումնարան են ուղարկում, որպէս զի « սեն ու սպիտակը » ճանաչեն, իսկ եթէ դպրոց չկայ, յանձնում են գիւղի տիպացին, որ հա-

յեկ, Սաղմոս կամ փոխասացութիւն սովորեցնէ։ Սակայն զարնան, երբ երկրագործական աշխատանքներն սկսում են, երեխաներին դուրս են բերում դպրոցից և իրենց դաշտային աշխատանքներին միացնում։

Ընդհանրապէս աղջիկները մեծամասնութեամբ գուրկ են մտում կրթութիւնից. մայրերը նրանց սովորեցնում են տուն աւելել, լացք անել, շենագործ նախել, գուլպայ գործել, կարկատել, ոչխար կամ կով կթել և այլն։ Նրանք դպրոցի երես չտեսնելով՝ անգրագէտ են մտում և խարխափում տգիտութեան և խաւարի մէջ։

Վերջին տարիներս մի քանի ունեւոր ընտանիքներ, ըմբռնելով ուսման նշանակութիւնը, իրենց զաւակներին ուղարկում են Նոթ-Ջուղա, ուր նրանք «Ազգ. երկինս դպրոցներում» ուսանելուց և աւարտելուց յետոյ, չունեն հաւսեր, չնդկատան, թէհրան և այլ վայրեր՝ փող չաւելու։ Այսօր բազմաթիւ պանդուխտ քահարամահալցիներ կան կալվածք, Բոմբէյ, Ռանգուն, Մադրաս, Հասթերի, Թէհրան, Նոթ-Ջուղա և այլ տեղեր. նրանցից շատերն ամուսնացել և ընտանիք են կազմել, իսկ շատերն էլ հարստացել և մեծ գիրիկ տէր դարձել։

Ամուսնութիւն և Հարստակցիք. — Ինչպէս հայ յարնակ շատ զաւաններում, այնպէս էլ Զահարմահալում ամուսնութիւնն ու հարսանիքն իրենց ծէսերով, սովորութիւններով և առանձնատկութիւններով խիտ նահապետական են ու պարզ, և զիւղացիներն առանձին յարգանքով են տօնում հարսանեկան հանգէսը, որովհետեւ դա մարդու կենսի մանամեծ տօնն է։

Հասակ. — Զահարմահալի տղամարդու մէջ սիրոյ զգացմունքը դէպի կինը՝ չէ զարգացած, որովհետեւ շատ փոքր հասակում են նշանուում և պսակուում. 12-18 տարեկան երիտասարդն արդէն «Կաքժօրցու» է, իսկ 10-15 տարեկան աղջիկը՝ «հարսնեցու»։ Այսպէս վաղ պսակող զոյգերն ամուսնութեան մտօնի գաղափար անգամ չեն ունենում։ Բացառութիւն կազմում են միայն փոքր ի շատ կրթւածները, որոնք աւելի ուշ են պսակուում։

Բաշխարմահալ. — Հայաբնակ այս զաւառում տղայ ու աղջկայ մանկական հասակում, օրօրոցի նշանադրութիւն շատ քիչ է պատահում։ Հին, նահապետական այդ սովորութիւնը, որի հետեւանքով այնքան կեանքեր են դժբախտացել և դժբախտանում, տեղապան բարբառով կոչւում է «խօսք տալ», որ առաջ է գալիս հետեւեալ զրդապատմաներից։ Երբ երկու ընտանիքներ

ցանկանում են միմեանց հետ սերտ յարաբերութիւն մշակել, օրօրոցից նշանում են իրենց զաւակներին. երբ մէկն այրու զաւակները սովորաբար չեն ապրում՝ երեխային շուտով նշանում են մի աղջկայ վրայ, որպէս զի նրա բախտն ապրեցնէ զաւակին։ Շատ անգամ էլ այդ ցանկութիւնը ծագում է մի ծնողի մէջ այսպէս. մանչ մանկուկ օժտւած է լինում և ունի յատկութեամբ, օր. գեղեցկութեամբ, յաշոյ ձայնով, սրախօսութեամբ, ընդունակութեամբ։ Այդ երեւոյթը աղջկայ հօր վրայ այնքան խոր տպաւորութիւն է թողնում, որ նա ուխտում է նրան ամուսնացնել իր աղջկայ հետ։ Յիշեալ ուխտերը կատարւում են սրբութեամբ, և երբ պատահում է որ ծնողներից մինը դրժում է իր խոստումը՝ այն ժամանակ միւսը նախատում է նրան և շատ անգամ թշնամանում։

Իրար հետ խնամիական սերտ յարաբերութիւն մշակող ընտանիքները, որոշ տօներին՝ Բարեկենդանին, Զատիկին, Համբարձման, Վարդավառին, Աստածածնին և Ա. Խաչին միմեանց փոխադարձաբար հիւր են գնում և ընծաներ ուղարկում, որ զխաւորապէս բաղկացած է լինում՝ անուշեղեններից, ինչպէս օր. քաթիկ, հաւլայ, կարագ, սէր, չամիչ, նուշ, ձու և այլն։

Սակայն շատ անգամ պատահում է, որ նշանւած երեխաներից մէկը մեռնում է, այն ժամանակ խնամիքները սառում են միմեանցից։ Բայց երբ նշանւածները հասակով մեծ են լինում և մեռնողը հարսնեցուն է՝ դպրոցցուն ևսուս, նշանում է նրա կրտսեր քրոջ հետ, իսկ երբ դպրոցցուն է մեռնում, նրա կրտսեր եղբայրն է ամուսնանում հարսնեցուի հետ։ Սակայն այսպիսի դէպքեր շատ քիչ են պատահում։

Աղջիկ փախցնել. — Զահարմահալում առեւանգելու և աղջիկ փախցնելու սովորութիւն չկայ, բայց պատահում է, որ երիտասարդի ծնողները չին ցանկանում իրենց որդու սիրածը հարսնացու բերել. այդ դէպքում նա պսակուում է և հայրական տանից բաժանելով՝ առանձին տան հիմք դնում։

Աղջիկ ուզել. — Սրանից 15 տարի առաջ Զահարմահալում ամուսնութիւնը կատարւում էր ծնողների կամքով և ընդհանրապէս երիտասարդի մայրը հօր համաձայնութեամբ հարսնացու էր ընտրում. ամուսնացողները երբեք իրար չէին տեսնում և նրանք պարտական էին հնազանդել իրենց ծնողների կամքին, թէկուզ իրենց սիրածն էլ չլինէր։ Այժմ թէև ամուսնութիւնը կատարւում է ծնողների կամքով, բայց նշանա-

կույթին է տրուում տղայի և մասամբ էլ աղջկայ կամքին. ամուսնացող զոյգերը պէտք է իրար տեսնեն և հաւանեն:

Ծնողներն իրենց որդու հուռնութիւնն առնելուց յետոյ իրենց միջին մի ծնրունի, որ ընդհանրապէս երիտասարդի հօրեղբայրը կամ մօրեղբայրը և կամ մօտիկ մի անձնաւորութիւն է լինում և տեղական բարբառով կոչուում «քեաղ-խուղայ», ուղարկում են աղջկայ պապի կամ հօր մօտ խնամախօսութեան: Քեաղխուղան երբ ներս է մտնում աղջկայ տունը, սովորական հարց ու բարևից յետոյ ասում է.

— Գիտե՞ս ինչ, խնամի Բարսեղ, արգ անեմ, օր մենք էկել ենք ձեր բաղիցը մէ ծաղիգ քաղելու. ձեր վարթիծուն նշաններ մեր վարթաւ նին:

Եթէ աղջկայ ծնողքը տրամադիր չէ տալու, պատասխանում է.

— Զէ խնամի Արշակ, Աստած ձեր տղէն ձեր հմար շատ պահի, մեր ախլիքը մեր հմար. մեր ծաղիգը դեռ չէ բացվի:

Իսկ եթէ տրամադիր են տալու՝ ասում են.

— Խօ՛՛՛բ, ախլի մենք շօհր ու օպաւհ (խորհրդակցութիւն) կօնենք ու յէթուց մէ պատասխան կու տանք:

Մի քանի օրից յետոյ աղջկայ ծնողքը յայտնում է իր համաձայնութիւնը: Դրա վրայ երիտասարդի հայրը և քեաղխուղան իրենց հետ մի «քեաղաղանդ» և մի կանաչ ակով արծաթէ մաս, տանի վերնելով՝ գնում են աղջկայ տունը, ուր փոքր ինչ խօսակցութիւնից յետոյ, տղի հայրը ջուր է խնդրում. հարսնացուն իսկոյն բերում է ջուրը: Այս ժամանակ երիտասարդի հայրը համբուրում է հարսնացւի ճակատը, մատանին դնում նրա մատը և ջրամփնի մէջ 1-2 դուռն փող է գցում: Այս առաջին նշանը տեղական բարբառով կոչուում է «Բալէհ»: Այնուհետև շնորհաւորում են միմեանց, բարիմաղթութիւններ անում և որոշում են նշանադրութեան օրը:

Նշան դնել. — Որոշած օրը, հիւկոյեան դէմ, երիտասարդի հայրը մի «մաշիմայի» մէջ մի լիտր չամիչ, երկու գլուխ չաքար, մի գոյգ մոմ, հինգ և մի աման հալւայ դնելով՝ իր տնեցիներէից մէկի ձեռքով ուղարկում է աղջկայ տունը, որ տեղական բարբառով կոչուում է «Բէլզայ»: Նշանակէ հարսնացւի տանը նւէրներ ուղարկում են երիտասարդի մօտիկ ազգականները, որ կոչւում է «փայ»: Այնուհետև տղատէրը հրաւիրում է իր մօտիկ ազգականներին, ծանօթներին, քահանային, քաւորին և նրանց հետ միասին գնում

աղջկայ տունը: Սովորաբար փեսացուն չի գնում: Երբ հասնում են հարսնացւի տան դռան, աղջկայ հայրն ընդառաջ է գալիս և ներս հրաւիրում խնամիներին և թէյով հիւրասիրում: Դրանից յետոյ տղի հայրը խնդրում է աղջկայ հօրից հարսնացւին բերել իսկոյն մի կնոշ առաջնորդութեամբ հարսնացուն, բերանը մեռածն է թալանակով բռնած, ներկայանում է հիւրերին և աւագութեան կարգով «ծախի է տալիս» (գլուխ խոնարհում): Այս ժամանակ հիւրերը հարսնացուն առաջնորդող կնոշ ձեռքում գտնուող պնակի մէջ ձգում են 1-2 դուռն փող, իսկ տղի հայրը, պապը և մայրը համբուրում են հարսնացւի ճակատը և բուռը դնում են 5-30 դուռն փող: Այդ փողերը, որ տեղական բարբառով «երէտեսնուկ» է կոչուում, պատկանում են հարսնացւին, բամբակէ թելի վրայ շարելով՝ գցում են նրա վրէք: Այնուհետև քահանան կառարում է նշանադրութեան ծէսը և մի «Պյան պանիլ» տանելով՝ շնորհաւորում և բարիմաղթում է այսպէս. «Աստած շնաւոր անի, էրկու կողմից էլ յանկէներդ լուս, սիրով բարեկամներ ըլնեք, մէ բախտով ծերանան, Աստած օրհնի իրանց կեանքը և Հայր Ապրամ օրհնութիւնը իրանց վրայ ըլնենայ»: Ապա երկու կողմից շնորհաւորում են միմեանց և բարեկաղթութիւն. ներ անում, որից յետոյ երիտասարդի տանից բերած չամիչը փոքրիկ պնակներով մատուցաւ նում են հիւրերին, որոնք ածում են իրենց զրրպանները, մի քիչ էլ նստում և ցրւում են:

Հալաւտես. — Նշանադրութիւնից մի քանի օր յետոյ երիտասարդի մայրը և նրա ազգական կանայք գնում են աղջկայ տունը «հարստես», իրենց հետ հարսնացւի համար տանելով հալւայ, ներկած ձու, սեր, նուշ և այլն, որ գիւղական բարբառով կոչուում է «փայ»: Երբ խնամիները մօտենում են տան դռան, աղջկայ մայրն ուրախ դիմաւորում է նրանց, ներս հրաւիրում և թէյով հիւրասիրում, որից յետոյ գալիս է հարսնացուն. երիտասարդի մայրն ու հիւրերը համբուրում են նրան և զրպանն ածում քաղցրաւներ ու չամիչ, իսկ բուռը դնում են 1-2 դուռն փող: Ապա ընթրիք են տալիս խնամիներին:

Փեսատես. — Մի քանի օրից յետոյ աղջկայ մայրն իր ազգական կանանց հետ գնում է փեսացւի տունը «փեսատես», ուր մի քիչ նստելուց յետոյ թէյով հիւրասիրում են. գալիս է փեսացուն, գոքանը համբուրում է նրա ճակատը և զրպանը չամիչ ածում, ապա հագնւում է իր հետ բերած գօտին, կապան, իսկ գլխին դնում

է մի գլխարկ: Այնուհետեւ միւս կանայք համբուրում են փեսացւի ճակատը և զրպանը չամիչ ու քաղցրաւենիք ասելով: Գրանից յետոյ յաջորդում է ընթրիքը: Վերադարձին խնամինքը «խալախ» (նւէր) են ստանում:

Նշերհեր. — Սոժորաբար հարսանիքը կատարում է նշանադրութիւնից երեք ամիս կամ մի տարի անց, բայց երբեմն էլ տարիներով նշանաւած են մնում: Այդ ժամանակամիջոցում փեսացուն յաճախ գնում է սիրածի տունը, իսկ խնամինքը հիւրասիրում են միմեանց և նշանաւոր տօներին՝ Զորհնէթին, Բարեկենդանին, Չատին, Համբարձմանը և Վարդավառին միմեանց փոխադարձաբար «փայ» են ուղարկում: Հարսանիքի բաժանումները. — Հարսանիքը գլխաւոր բաժանումները ու հանդէսներ ունի, որոնք են բարգայ կտրէք, յօրածէվէք, նշանդէք, քան օխնել, ծառ գոզել և հաւազուխ:

Հարսանիք անում են ամենից աւելի բարեկենդանին, որի պատրաստութիւնն սկսում են Զորեքշաբթի օրը, որ տեղական բարբառով կոչւում է «զօղվիրիկուն»։ Սոժորաբար տնում է երեք օր, Զորեքշաբթի օրւանից մինչև Ուրբաթ, և մօտաւորապէս 100—150 թուման ծախս է լինում փեսայի և հարսի կողմից:

Բարգայ կտրէք. — Հարսանիքից մի քանի շաբաթ առաջ տղի հայրը, կնքահօր, քահանայի և մի քանի մօտիկ ազգականների հետ, մի երեկոյ, գնում է հարսնացւի տունը, ուր հրաւիրւած են լինում նաև վերջինիս մօտիկ ազգականներից մի քանիսը: Այստեղ որոշում են պսակի օրը և այն ամէնը, ինչ որ տղի հայրը պիտի բերի հարսանիքի օրը, օր. 10—20 լիտր չամիչ, $\frac{1}{2}$ —2 լիտր դանդ, $\frac{1}{2}$ —1 լիտր իւզ, 5—12 լիտր բրինձ, մի ուխար և 5—15 թուման փող: Երկու կողմից որոշ համաձայնութեան զաւուց յետոյ, մի—մի բաժակ թէյ են խմում և ցրւում: Այնուհետեւ տղի հայրը գնում է գիւղի քահանայի մօտ և նրանից մի վկայական ստանալով՝ դիմում է զործակալ-քահանային և ստանում պսակի հրամանը:

Շօրածէվէք. — Բարգայ կտրէքից մի քանի օր անց տղի հայրը գնում է քաղաք (Սպահան կամ Որօշան) և տղի ու հարսնացւի համար յարմար կտորներ առնելով՝ վերադառնում է գիւղ: Այնուհետեւ տղի մայրը հարսնացւի մօրը և նրա մօտիկ ազգականներին հրաւիրում է «Շօրածէվէք»ին: Երբ խնամինքը գալիս են, տղի մամը բերում է մի բոխի մէջ կապած կտորեղէնները և ցոյց է տալիս խնամինքին, ապա ձեռում է

թէ՛ փեսացւի և թէ՛ հարսնացւի հարսանեկան շորերը, որից յետոյ խնամինքը հիւրասիրում են թէյով և ցրւում: Գրանից յետոյ թէ՛ փեսացւի և թէ՛ հարսնացւի տանն սկսում են հարսանիքի պատրաստութիւնները տեսնել:

Փեսացւի տանը զարդարում են մի սենեակ, որի մի պատից կախում են «փարգայ» (մի նաշիտն կարպետ), որպէս զի թագաւորը, քաւորը և փեսաղէէրն առջևը կանգնեն, իսկ առաստաղը և պատերը զարդարում են ալիւրով: Նման մի սենեակ պատրաստում են նաև հարսնացւի տանը: Այնուհետեւ, հարսանիքի շաբթին, «չիթիով» (հրաւիրատոմով) հրաւիրում են հետու գիւղերի բարեկամ — ազգական գիւղացիներին, իսկ հարսանիքի իսկական օրը որոշած մի մարդ չըլում է գիւղի տները և բոլոր գիւղացիներին, առանց խտրութեան, հարսանիք է հրաւիրում: Մի երկու ժամ անց գիւղացիները երիտասարդ, աղջիկ, հարս, կին, ծեր երեխայ, զուգած—զարդարած, հետգնետ հաւաքւում են թագաւորի տունը և մի քանի շաբթերի նստում սենեակների մէջ: Ամէն մի եկողի «զալաքն» անմիջապէս մի փոքրիկ պնակով չամիչ է մատուցանում: Երբ բոլորը հաւաքւում են՝ իսկոյն մի մատուցարանի մէջ դնում են մի գլուխ դանդ, հարսի երեսնոցը և մատանին, իսկ մի ուրիշ մատուցարանի մէջ տօնում են չամիչ և քաղցրաւենիք, ապա մատուցարանները դնում են երկու երիտասարդների գլխին և սազ ու դափի նւագածութեամբ, ջահէլ հարսներն ու աղջիկները մետաքսէ թաշկինակները ձեռքերին հանդիսականների առջևից պարելով՝ դիմում են հարսնացւի տունը: Տասը լուպէ անց գնում են քահանան, քեաղթուղան և ծագեալ հիւրերը: Երբ հասնում են հարսնացւի տան դռան, խնամինքն ընդառաջ են գալիս և բոլորին ներս հրաւիրում: Այստեղ քահանան օրհնում է նշանը, որից յետոյ հիւրերն չամիչ են բաժանում և ապա հրաւիրեալները ցրւում են: Այնուհետեւ քաւորը բաղնիս է հրաւիրում թագաւորին, որ սոժորաբար քաւորի տանն է լողանում, գիւղում բաղնիս լիկնելու պատճառով: Մի ժամ անց թագաւորի ազգական երիտասարդները, աղջիկներն ու հարսները նրա գեղատը դնում են մի մատուցարանի մէջ և սազ ու դափի նւագածութեան տակ պարելով՝ դիմում են քաւորի տունը: Այստեղ հազցնում են թագաւորի գեղան, վզին կապում են մի մետաքսէ թաշիկ, նակ, ապա սազ ու դափի առաջնորդութեամբ վերադառնում են թագաւորին և քահանային, իւրաքանչիւր տասը քայլի վրայ,

խմբովին երգում են հետեւեալ գողտրիկ երգը.

Դաքժօրի յէմէսը պարզ,
Տղամարթիքն ապրած.

Դաստ բեղաստ,
Դուշմանը սազ,
Ձին վազգուզ,
Թուրը կտրուկ,
Երկնքէն ցօզ,
Գետնէն պտուղ.
Հօյ շօքօ՛շ,
Հօյ շօքօ՛շ...

Երբ հասնում են տան դռան, թագաւորը, քաւորը և փեսաղէրը կանգնում են մի գծի վրայ. իսկոյն հաւաքում են զգիւղի բոլոր կանայք. նրանք իրենց հետ երեք կտոր դանդ և երեք պնակ չամիչ բերելով՝ ածում են թագաւորի, քաւորի և փեսաղոր գրպանները: Մինչդեռ կանայք հետզհետէ հաւաքւում են՝ սազ ու դափի հնչում է և երիտասարդները, ջահէլ աղջիկներն ու հարսները, թաշկինակները ձեռքերին, պարում են, և այսպէս ուղիղ մի ժամ, օրից յետոյ հանդիսականները ցրւում են:

Գաւով հարսնացիին, մօտիկ ազգականներին մէկը հրաւիրում է իր տունը լողանալու: Մի ժամ անց նրա բարեկամներն ու ազգականներն իրենց հետ մի մասնան (էգ ձի, որի վիզը զարդարում են մետաքսէ թաշկինակներով) վերցրւելով՝ սազ ու դափի նւագածութեամբ պարելով գնում են հարսին բազմսից դուրս բերելու: Երբ հանդիսականները հասնում են, հարսնացուն իսկոյն դուրս է գալիս և կանգնում դռան առաջ. կանայք աւագութեան կարգով մօտենում են նրան, համբուրում և մի-մի կտոր դանդ դնում ձոցը, որպէս զի իր և ամուսնու կենանքը քաղցր լինի, իսկ տղամարդիկ 1-2 փող են նւիրում, որ տեղական բարբառով կոչւում է «լաշիկ կանչել»: Լաշիկից յետոյ հարսնացին դնում են ձիու վրայ և սազ ու դափով վերադառնում են նրանց տունը, ուր, դռան առաջ, նորից «լաշիկ» են կանչում, որից յետոյ հանդիսականները ցրւում են: Հոյն երեկոյան թագաւորի հայրը հրաւիրում է զգիւղի հասարակութեան, ինչպէս նաև հարսնացւի ծնողներին ու ազգականներին և հիւրասիրում է նրանց թէյով ու ընթրիքով: Հարսնացւի ծնողները մի մատուցարանի մէջ 1-2 գլուխ շաքար դնելով՝ սազ ու դափի նւագածութեամբ ուղարկում են թագաւորին տունը, որից 10 րոպէ անց գնում են իրենք. իսկ թագաւորի մայրը մի մատուցարանի մէջ չամիչ և

դանդ դնելով՝ ուղարկում է քաւորի տունը, որ կոչւում է «քաժօրասեղան»: Հոյն մատուցարանի մէջ քաւորը մի դանդ և չամիչ աւելացրւելով՝ սազ ու դափով ուղարկում է թագաւորին տունը, ապա գնում է ինքը: Երբ թագաւորին տան բոլոր հիւրերը հաւաքւում են, «ծաղիկ» (փող, դրամ) են ժողովում «դաքժօր»ին ծախքը թէթեանցնելու համար: Հայն հարսատիրոջ ծաղիկն են ժողովում, ապա քաւորի, որ կոչւում է «քաժօրասեղան», յետոյ՝ հասարակութեան: Կաղիկը ժողովւում է հետեւեալ կերպով. դաւլաքն ձեռքին մի մօմ բռնած՝ կանգնում է հրաւիրեալների մէջտեղը և ստանալով իւրաքանչիւրի նէրը, բարձրածայն կանչում է.

Շէն կէնայ (օր.) Մինաս Մկրտումին,
Մէ լաւ ծաղիգ դաքժօրին:

Ծաղիկը հաւաքելուց յետոյ, որ լինում է 20-30 թուման, յանձնում է թագաւորի հօրը, որ բոլոր հիւրերին շնորհակալութիւն է յայտնում. «Աստած ձեր քիսկին (քսակին) բարաքաթ տայ» ասելով: Այնուհետև հիւրերին ընթրիք են տալիս, որից յետոյ հարսի ծնողներն իրենց հրաւիրւանքով վերադառնում են, իսկ թագաւորի հիւրերը մինչև լոյս ուրբախում են, երգում և պարում: Մի տեղ տղամարդ տղամարդու և կամ կին կնոջ հետ, մի ձեռներով միմեանց զօտուց խաչաձև բռնած, իսկ միւս ձեռներում թաշկինակներն առած «զօտի-զօտի» են պարում. կամ միմեանց մօտ կողք-կողքի տած, շրջան են կազմել և սազ ու դափի ծէլոցին համաձայն պարում են: Պարն առաջնորդում է մի ճարպիկ տղամարդ, որ ոտների և ձեռների արագ շարժումներով դեկավարում է ամբողջ պարաշղթան: Պարողները ոտքերին երկու անգամ դէպի առաջ են մղում և մի անգամ յետ, ապա բազմ թէյով թողնում ձեռները և երեք անգամ ծափ տալով երկու - երեք ոտք պտտում են դէպի աջ. սա համարեա միօրինակ պար է, որ տեղական բարբառով կոչւում է «Ջա-նիման». և կամ պարում են առանձին - առանձին կամ տղամարդ տղամարդու հետ և կամ կին կնոջ հետ, դէմ դիմաց կանգնած, միմեանց հետեւելով, միմեանց յարմարեցնելով իրենց շարժումները: Այս պարը կոչւում է «Քաս»: Մի տեղ 20-30 երիտասարդներ կամ կանայք ձեռներին երկու թաշկինակներ առած, սազ ու դափի ծէլոցի համաձայն «Չուփի» են պարում. նրանք ձեռները տարածում են և օդի մէջ շարժելով թաշկինակները, ոտների շարժումների հետ գանգալն ձեռք են տալիս: Մի ուրիշ տեղ մի զոյգ

երիտասարդներ ձեռներին մի — մի զոյգ հաստ ճիպոտներ առած՝ միմեանց դէմ կանգնած մըըցում են. նրանցից առաջինն աշխատում է ձեռնարկ ճիպոտներով զարկել դիմացինի ոտներին (ոտներից վերև և ձեռների երեսին զարկելու իրաւունք չունի), իսկ նա պաշտպանում է, և այսպէս շարունակում է մինչև դիմացի զարկելը, որից յետոյ դերերը փոխում են: Այս պարը, որ լօտերից են վերցրել, գիւղական բարբառով կոչւում է «դուռնաբազի»: Մի այլ կողմում փոքրիկ տղաները «հաֆպանդ» (չի) են

գիշեր: Այնուհետև մի մատուցարանի մէջ դնում են մի հաց, չամիչ, հինայ և մի զոյգ մոմ, ապա ջահէլ աղջիկները, հարսները և մի քանի երիտասարդներ սազ ու դափի նազաձուլեալով պարելով, խաղալով, խնդալով և մէջընդմէջ «դաքվօրի յէլէսը պարզ» երգը երգելով՝ դիմում են հարսնացւի տունը: Այստեղ թագաւորի քոյրը կամ մօտիկ ազգականներից մէկը հինայում է հարսի ձեռները. նոյնպէս հինայում են իրենց ձեռները ջահէլ հարսներն ու աղջիկները և սկսում են պարել, որից յետոյ մի փոքր էլ նստում



Հարսամիջը Չառարմահալի մէջ

ածում և մէկ մէկ պար գալիս: Մի այլ տեղում ջահէլ աղջիկներն ու հարսները «թև — խաչ» են պարում. նրանք ձեռներին բռնել են մետաքսե թաշկինակներ, գլուխները թէքել դէպի աջ ու սիւրը, ձեռները տարածել և օդի մէջ թաշկինակները շարժելով՝ ոտների շարժումների հետ գանազան ձևեր են տալիս, երբեմն իրանն այս ու այն կողմը թեքելով: Մի այլ տեղ հարսներինը խմբովին նստած լսում են աշուղին, որ «դամ» ու «օհբաթ» անում, այսինքն չոնգուրը ձեռքին վեր վար է գնում գալիս և նազում, կամ սիւրային հրգեր է երգում, և այսպէս մինչև կէս

են հիւրերը և վերադառնում թագաւորէնց տունը, ուր մինչև լոյս քէֆ են անում: Այնուհետև հարսէնց տան մի մատուցարանի մէջ դնում են հինայ, չամիչ, մի զոյգ մոմ և սազ ու դափով գնում են թագաւորէնց տունը, ուր հարսնացւի քոյրը կամ մօտիկ ազգականներից մէկը հինայում է թագաւորի ձեռները, որից յետոյ հիւրերը վերադառնում են հարսէնց տունը և մինչև լոյս ուրախութիւն են անում, պարում և երգում:

Լուսադէմին, թագաւորէնց տան, հանդիսականներից մէկն առաջարկում է «ծառ» գովել. թագաւորի մայրն իսկոյն մի մատուցարանի մէջ

քաղցրուենիք կամ չամիչ ածելով՝ դնում է հանգիսականների առաջ, ապա զալիս են թագաւորը, քաւորն ու խաչգեղայրը և կանգնում պատրաստած «փարդի» առաջ: Այս ժամանակ հանդիսականներից մէկն երգում է.

Օրհնեալ է Աստած.
Օրհնեալ է Յիսուս.
Օրհնեալ է Քրիստոս.
Դաքժօրն բերինք քե նման,
Քու կանանչ յարէվի նման.
Էն սուսան – սմբուլն,
Օր բացվէլ է,
Օր բացվէլ է,
Յարէվի նման:

Յետոյ խմբովին թնդացնում են.

Աւրբ կարապետայ՝
Օրհնութունով,
Օրհնութունով,
Դառսի ծաղկէցաւ,
Դառ ծաղկէցաւ,
Ճուխկ բազմէցաւ,
Կանանչ ու կարմիր:

Այնուհետե «Օրհնեալ է Աստած» երգողն աւում է.

Գնացէք, բերեք սէլով սէղան,
Դառ գողօղին խալաթ պիտի:

Արա վրայ բաժանում են չամիչը և նորից սկսում են ուրախանալ:

Առաւտեան քահանան հրաւիրում է թագաւորէնց տունը հանդերձն օրհնելու. իսկոյն հարսնացին հարսանեկան շորերը (օյմա, գօտիք, յապիկ, դօբանդի (կօշիկ), լաշիկ և կօթ մի մասնուցարանի մէջ դնելով՝ բերում են նրա առաջ. այս ժամանակ քաւորը և թագաւորը (հարսանեկան շորերը հագած) գալիս շորում են մասնուցարանի կողքին. քահանան օրհնում է հարսնացիին զգեստը: Դրանից յետոյ թագաւորի հայրը մարդ է ուղարկում հարսի հօր մօտ և «պսակելու» իրաւունք է խնդրում: Աղջկայ հայրը համաձայնում է: Դրա վրայ հանդիսականները հարսի զգեստը վերցնելով՝ սազ ու դափով գնում են հարսէնց տունը: Դրան առաջ թագաւորի ընտանիքի հարսներից մէկը, հարսնացիի շորերը գլխին դրած, պար է զալիս և

1-2 դուռն փող ստանում, որից յետոյ հանդիսականները ներս են մտնում, ուր մի փոքրիկ սենեակում, հարսներն ու աղջիկները շրջապատած նորահարսին՝ հագցնում են և զարդարում: Հարսնանուն սաստիկ զգացած լաց է լինում. ընկերուհիները զգում են և սիրտ տալիս: Կինդեռ հարսին հագցնում են՝ սազանդարը և դափաչին գնում են թագաւորէնց տունը և թագաւորին ու ժողովին հիւրերին վերցնելով՝ գալիս են հարսէնց տունը: Երբ հասնում են տան դռան, թագաւորի զգեստը դուրս է գալիս, համբուրում թագաւորի երեսը, վզին կապում մետաքսէ մի թաշիկնակ և ծոցը դնում է մի կտոր դանդ: Այնուհետե մօտենում են հարսի բարեկամները և թագաւորի, քաւորի ու փեսայի զրպաններն ածում չամիչ, իսկ ծոցները դնում են մի – մի կտոր դանդ: Ապա հանդիսականները մտնում են ներս: Այս ժամանակ հարսին սենեակից բերում են դուրս քահանայի առաջ, ուր արդէն կանգնած է լինում թագաւորը: Այստեղ քահանան երեք անգամ «խոստում» է առնում թագաւորից և հարսից:

Վերջապէս սազ ու դափը հնչում է պսակ տանելու եղանակը: Գալիս են հարսի հայրն ու մայրը և արտասուլից օրհնում ու համբուրում փեսի ու աղջկայ նկատները: հարսը հեկեկալով համբուրում է ծնողների ձեռները և հրաժեշտ է տալիս հայրական տանը: Այնուհետե առաջ են ընկնում սազանդարն ու դափաչին, նրանց հետեւում են ջահէլ հարսներն ու աղջիկները, ապա մի զմի վրայ հարսը, փեսան և աջ կողքից խաչաղբէրը. սրանց հետից խուռն հասարակութիւնը՝ ծանր քայլերով դիմում են եկեղեցի: Ճանապարհին ջահէլները պարում են և երգում. հէնց որ հասնում են եկեղեցու դռան, սազ ու դափի իսկոյն կտրում են իրենց ձայնը, մինչև հարս ու թագաւորի եկեղեցուց դուրս գալը: Եկեղեցում քահանան խոստովանեցնում է հարս ու թագաւորին, ապա կատարում պսակի խորհուրդը, որից յետոյ նա խաչը վերցնում է թագաւորի գլխից և նորապսակները դուրս են գալիս եկեղեցուց: Այնուհետե հանդիսականները նոյն կարգով, առջևից քահանաները շարականներ կարդալով՝ դիմում են թագաւորի տունը: Երբ հասնում են տան դռան՝ դալլաքը «լաչիկ» կանչում, որից յետոյ «հաւազուլն» ի ծէսն են կատարում. թագաւորի մօտիկ բարեկամները բերում են 10-15 հաւ ու աքլոր և յանձնում դալլաքին. սա հաւերից մէկի ոտքերից բռնելով՝ կախում է գլխիվայր. թագաւորը սրի մի հար-

1. Այս երգը երգում են բոլոր սրբերի անուններով:

ւածով թոցնում է հաւի գլուխը, Նոյնը փորձում են նաև թագաւորի երիտասարդ բարեկամները: Այս սովորութիւնը, սակայն, հետզհետէ վերաւորում է: Հաւազութից յետոյ քահանան «թա՞գաւոր գոլով» շարականը երգելով՝ տան դռնից ներս է մտնում, նրան հետևում են թագաւորը, հարսը և խաչիղբայրը, ապա հարսնեղբեքը: Թագաւորն ու խաչիղբայրը գնում, կանգնում են «փարդի» առաջ, իսկ հարսը գնում է իր բաժանմունքը: Այս միջոցին սազ ու դափը հնչում է աւելի ուժգին և երիտասարդները, ջահէլ աղջիկներն ու հարսներն ուրախ տրամադրութեան ներքոյ՝ սկսում են երգել և պարել: Թագաւորի հայրն իսկոյն մի մարդ է ուղարկում գիւղի տները և բոլոր զինակազմներին ճաշի հրաւիրում: Կարճ միջոցում հաւաքւում են և անմիջապէս, նստի տղամարդիկ և ապա կանայք, ապագութեան կարգով, երկրորդ ու նեղ սփռոցնէլով ծածկւած յատակի վրայ, միմեանց հանդէպ, ծալապատիկ նստում են: Քահանան օրհնում է սեղանը և բոլորն էլ սկսում են ճաշի: Սովորաբար մատուցանում են եփսիսի և փլաւ: Ծաշից յետոյ մինչև երեկոյ քէֆ են անում և ապա ցրւում:

Այլիկի նշանադրութիւնն ու պսակադրութիւնը. — Այլիկին չի վերադառնում հօրանց տունը, այլ մնում է սկեսրանց տանը, իսկ եթէ ցանկանում է կրկին ամուսնանալ՝ գաղտնի խօսք է տալիս իր սիրածին և նրանից մի մատանի է վերցնում, որով նշանադրութիւնը կատարւած է համարւում: Անուհետև սիրածը պաշտօնապէս խնդրում է նրա ձեռքը սկեսերիցին կամ սկեսրայրիցը: Համաձայնութիւնն ստանալուց յետոյ, մի որոշեալ գիշեր, եկեղեցում կատարւում է պսակը, որ լինում է շատ պարզ, առանց սազ ու դափի:

Վիեննա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարումակելի)

Բարոյն մէջ համախորնութիւնը՝ կը բազմացնէ սէրն ու զօրութիւնը. իսկ համակրութիւնը՝ զուլթն ու օգնութիւնը, որ մեծ և կարեւոր ոգորմունքիւն մ'է:

ԱՄՆԱՆ

Երբ անձ մը կը տառապի ֆիզիքական կամ բարոյական ցաւով՝ դեռ մի տար իրեն օգնութիւն և ոչ քաջալերական խօսք մ'ըսէ. ամէն բանէ առաջ տուր կարեկից հայեացք մը:

ՅՐԻ. ՄԵՐՍԵՏԷ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՆՈՒԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒՅՈՒՅԷ

(Շար. տես Բազմավէպ, 1924 էջ 302)

ԻԶ.

ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱՊՈՒՍՏԱՅԻՒԱՅ

Տրամաբան զրութիւններ պարունակող ձեռագիր մը սկիզբը կը գտնուի այս Մարդակազմութիւնը, որ անգամ մը նիւթ եղած է ինձ 817 թուահամար Ձեռագրին ուսումնասիրութեան մէջ:

Ամբողջ ձեռագիրը փայտեայ կողբերով կաշէկազմ ըլլալով, հազիւ ունի 10 հարիւրդամեղ մեծութիւն՝ 8 հարիւրդամեղ լայնութեամբ և 3, 5 հարիւրդամեղ թանձրութեամբ, որուն թուահամարն է՝ 276:

Գիրը ամբողջ նոտը է, միասին, թուրք բամբակեայ, հանգամանքը լաւ:

Ձեռագիրն Պաշպալովէ Ս. Ղազար բերած է Հ. Միքայէլ Վ. Չամչեան 1790ին. և նուիրած է զայն Պաշպալովցի թովհանէն Ջիգիեան անուն անձը, որ 1768 չէր վրայ անտաշ գրերով իւր Յիշատակութիւնը կ'արձանագրէ այսպէս.

« Եփեսոսի և Յովնանիսի ՈՅ, ԱՂ, Սիւրբի Ջիգիեան, ի վաճառ Սրբոյն Ղազարոս որ ի վիճակի ձեռամբ, Հ. Միքայէլ վարդապետի Չամչեան. Յամի « Տեսան 1790, Ապրիլի 4-ին ի Պաշպալով:

*

Յայտնի չէ թէ երբ և ուր ընդորինաւորւած է ձեռագիրն. բայց ամենայն հաւանականութեամբ, 18րդ դարու սկիզբներն եղած ըլլալու է այն. սեղ մը կը կարդացուի թէ ընդորինակիչը եղած է ոմն Յովնանիսի Գրիգոր, զոր շփոթելու չէ համանուն նուիրատուն հետ:

Մարդակազմութիւնը կը գրաւէ ձեռագրին սկզբնական 58 էջերը՝ 29 թերթերով: